Արձանագրություն N 3

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/40» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի շարունակության

ք. Երևան

03.02.2017թ.
Ժամը՝ 11:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Իգիթյան/ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ե. Կարապետյան /գնահատող/, Ա. Կիրակոսյան /գնահատող/, Կ. Հարությունյան /բացող/, Ա. Հարությունյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Գների նվազեցման բանակցություններին անցակացման մասին

(Տ. Իգիթյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ համաձայն ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետի «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/40» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անցկացվող գնային առաջարկների նվազեցման բանակցություններին «Մառք» ՍՊԸ-ն մասնակցել է:

1.2 Բանակցությունների վարման համար հանձնաժողովի կողմից սահմանվել է 5 (հինգ) րոպե ժամանակահատված, որի ընթացքում մասնակցի կողմից ներկայացվել է նոր գնային առաջարկ (Հավելված 1-ը կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. «ԵՔ-ԲԸԾՁԲ-17/40» ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին

(Տ. Իգիթյան)

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ գնային առաջարկների նվազեցման բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտի դրությամբ ընթացակարգի 5-րդ չափաբաժնի մասով, ինչպես նաև ընթացակարգի մյուս չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվում «Մառք» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Տ. Իգիթյան)

3.1 Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ 03.02.2017թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

3.2 03.02.2017թ. ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով սահմանված ժամկետում

փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. Բաց ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Տ. Իգիթյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 09.02.2017թ. ժամը 11:45-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Տ. Իգիթյան

Անդամներ՝ ---------- Ա. Հարությունյան

---------- Ա. Կիրակոսյան

---------- Կ. Հարությունյան

---------- Ե. Կարապետյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան

Հավելված N 1

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման «ԵՔ-ԲԸՇՁԲ-17/40» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի թիվ 3 արձանագրության

ք. Երևան

03 փետրվարի 2017թ.
Ժամը 11:30

<<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնային առաջարկների նվազեցման նպատակով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների հետ իրականացված բանակցությունների ընթացքում՝ «Մառք» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԳԻՆ ՀՀ դրամ	ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՆՎԱԶԵՑՎԱԾ ԳԻՆ ՀՀ դրամ	Ստորագրություն
41 000	20 000	

«Մառք» ՍՊԸ
Մասնակցի անվանումը (անունը) (պաշտոնը, Անուն Ազգանունը)

(Ստորագրությունը)